

ԱՊԱՇԽԱՐԱՆՔ ՈՒ ՍԷՐ

«Եւ եթէ ունենամ ամբողջ հաւատը մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չ'ունենամ, ոչինչ եմ...» Ա. ԿՈՐՆԹԱՍԻՈՑ 13

Մեծ պահքի շրջանին մէջ գտնուելով, վստահ եմ, որ ամէնքս էլ մեր հաճոյքներին ու ցանկութիւններին սահմանափակումներ ենք դրել եւ ամէնքս էլ զբտնրում ենք ապաշխարութեան մէջ: ԱՊ-ԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ այսինքն հեռացում աշխարհից, այսինքն զսպում մեր հաճոյքների, ախորժակի, շոյալութեան: Այդ ամէնը սակայն պէտք է իմաստաւորել: Ամէն մի զսպումութիւն ու չափաւորութիւն անհիմաստ է, եթէ այն չի տրում յանուն աստուածահաճոյ գործերի: Զսպել ախորժակը, ոչ թէ իր կազմուածքի ու առողջութեան համար, այլ իր չկերածը անօթի մէկին տալու: Զշոյալել, ոչ թէ իր քսակը աւելի ուռնացնելու, այլ վասն ողորմութեան: Ներել՝ վասն սիրելու... Ոչ թէ պահք յանուն պահքի, այլ պահք վասն կատարելութեան: Շատերս պահքը դարձնում ենք նպատակ, այնինչ այն միայն միջոց պէտք է ծառայեցնել: Շատերս էլ միւս ծայրայեղութեան մէջ ենք ընկնում. ընդհանրապէս բացառելով պահքի նշանակութիւնը:

Բայց այդ ամէնից վեր կանգնած է մի առաքինութիւն, առանց որի մենք ոչինչ ենք, իսկ եթէ այն ունենք ուրեմն երիցս երանելի ենք:

Դա ՍԷՐՆ է: Եւ այսօր ես ուզում եմ խօսել սիրոյ մասին. առաքինութիւն, առանց որի անհիմաստ է դառնում ամեն ինչ: Սէրն է, որ իմաստաւորում է պահքն ու ծոմապահութիւնը, առանց սիրոյ չկայ քրիստոնէութիւն: Սէրն է, որ իմաստաւորում է աղօթքն ու ծէրը: Առանց սիրոյ չկայ հաւատ: Սէրն է, որ իմաստաւորում է մարդկային յարաբերութիւնները, առանց սիրոյ չկայ եկեղեցի: Սէրն է, որ արարեց աշխարհը, առանց սիրոյ չկայ մարդկութիւն: Սէրն է, որ փրկեց աշխարհը, առանց սիրոյ չկայ փրկութիւն: Աստուած սէր է, առանց սիրոյ մենք ԱՆԱՍՏՈՒԱԾ ենք:

Բոլոր մարդկային, միջկրօնական տեսութիւնները գալիս են սիրոյ պակասից: Երէկ հրեայ հոգեւորականի մը թփախառն արհամարհանքին արժանացայ, հերթական անգամ: Եւ ես ինքս ինձ մտածեցի: Զարմանալի է, մենք երկուսս էլ նոյն Աստուծոն ենք պաշտում, որտեղի՞ց այդ տեսութիւնը: Եւ այսօր հասկանում եմ որտեղից: Սիրոյ պակասից: Ինչպէս լոյսի պակասը խաւարն է, այնպէս էլ սիրոյ պակասը ծնում է տեսութիւն:

Աստուած ստեղծեց աշխարհը: Սիրով ստեղծեց այն: Եւ ամէն բան գեղեցիկ էր ու հաւասարակշռուած: Բայց կամաց-կամաց պակասեց սէրը: Իսկ մենք գիտենք, եթէ մի բան պակասում է, խախտում է հաւասարակշռութիւնը: Ազամը մեղանչեց, Կայէնը սպաննեց իր եղբորը: Ատելութիւնը մտաւ աշխարհ: Աստուած սէր է, բայց նաեւ արդար դատաւոր: Եւ ջրհեղեղ եղաւ աշխարհի վրայ: Աստուած չկործանեց մարդկութիւնը, այլ միայն ջրով մաքրեց տեսութիւնն ու անհաւատութիւնը: Իսկ սէրը չկործանեց, այլ նրան տապանի մէջ ապահով իջեցրեց Արարատի կատարին: Նորից հաւասարակշռութիւն տիրեց աշխարհի վրայ: Եւ նորից սիրոյ պակաս՝ մեղսալից ՍՈՒՄ: Աստուած սէր է, բայց նաեւ արդար դատաւոր: Ու հնչեց Արրահամի ձայնը. «Մի՞թէ Դու արդարին ամբարիշտի հետ կ'ոչնչացնես»: Տէրը պատասխանեց. «Եթէ 10 արդար էլ լինի, չեմ կործանի»: Կործանեց... Զէր կարող չկործանել, որովհետեւ Առդամում մի կաթիլ սէր չէր մնացել: Նոյնը 2000 տարի առաջ՝ աշխարհն ա-

պականուած ու անսէր: Բայց այս անգամ Աստուած չկործանեց այն: Այս անգամ Տիեզերքը հաւասարակշռելու ուզեց այլ կերպ. «Նւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի ով հաւատայ անոր, յաւիտեանական կեանք ընդունի» (ՅՈՎՂ. Գ-16):

Գիտե՞նալով, որ ատելութիւնը շատ է, գիտե՞նալով, որ կը խաչեն, բայց գիտե՞նալով նաեւ, որ այլ ելք չկայ, որ դա է միակ միջոցը հաւասարակշռութեան, աշխարհ իջաւ ինքը՝ Սէրը: Հետագայում Շնորհալին կը գրէ.

«Սէրդ սիրով խոնարհեցար, նովին մարմնովըն խաչեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար. Ի գերեզման մահու եղար»:

Նւ խաչուեց Սէրը՝ տալով իր պատգամը. «Սիրեցէ՛ք զմիմիանս»: Աստուած մէկ բան է ուզում մեզանից. սիրել միմիանց եւ աւելացնել սէրը աշխարհի վրայ, պահել աշխարհի հաւասարակշռութիւնը: Սիրելով միմիանց՝ մենք մասնիկն ենք դառնում Սիրոյ հրաշալի Յարութեանը, ատելով միմիանց՝ մենք խաչ ենք հանում Սէրը - որ է Աստուած:

«Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները, բայց սէր չունենամ, կը նմանիմ պղնձի մը՝ որ կը հնչէ, կամ ծնծղաներու՝ որ կը դողանքեն: Նւ եթէ մարգարէութիւն ընելու շնորհ ունենամ եւ հասկնամ բոլոր խորհուրդներն ու ամբողջ գիտութիւնը, եւ եթէ ունենամ ամբողջ հաւատք՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ: Նւ եթէ իմ ամբողջ ստացուածքս տամ աղփատներուն ու իմ այս մարմինը մատնեմ այրուելու, բայց սէր չունենամ, ոչինչ կը շահիմ: Սէրը համբերող է, քաղցր է, սէրը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, չի յանդգնիր, իրենը չի փնտռեր, չի զբոգոտիւր, չար բան չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ կ'ուրախանայ ճշմարտութեան վրայ, ամեն բանի կը դիմանայ, ամեն բանի կը հաւատայ, ամբողջապէս կը յուսայ, ամեն բանի կը համբերէ: Սէրը երբեք չսպառիր:

«Արդ կը մնան հաւատք, յոյս, սէր. այս երեքը, բայց անոնցմէ մեծը Սէրն է»:

Ահա Պօղոս առաքելի օրհներգը: Ոչ թէ օրէնքը, այլ օրհներգ: Քանզի սէրը օրէնք չի նանչնար, սէրը օրհնութիւն է, օրհներգ:

Այժմ ամենքս մեզ հարց տանք ու անկեղծ լինենք մեր պատասխանների մէջ: Կարելոք չէ, որ Յիսուս ծնունդ Բեթղեհեմում, կարելոքն այն է, թէ մեր սրտի ու հոգու մութ ֆարանձաւում մենք տեղ տալի՞ս ենք Սիրոյ արքային, այն ծնունդ է մեր մէջ: Երկնքում, այո՛ առկայծում է Սիրոյ աստղը, եւ նանապարհ է ցոյց տալիս մոգերին, բայց նրա ցոյքերը որքանո՞վ են լուսաւորում մեր հոգին եւ մենք արդեօ՞ք դէպի այդ աստղն ենք առաջնորդում մեր կեանքի անիւր: Յիսուս խաչունց ու յարութիւն առաւ, օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի: Իսկ գուցէ այն այդպէս էլ խաչուած մնացել է մեր հոգո՞ւմ, կամ նրան այդպէս էլ յարութիւն չտուեցինք մեր հոգու գերեզմանում: Նւ այդպէս էլ փակ մնաց այն՝ ատելութեան, չարի, նախանձի ու նենգութեան հսկայ գերեզմանաճարով, որը Յիսուս չի կարող շարժել, երբ մենք չուզեցանք այդ...

Ապաշխարհանքի շրջանին այս մտորումներն էին, որ ուզեցի կիսել ձեզ հետ: Մտորումներ էին դրանք, քան թէ ֆարոգ, որովհետեւ ինչպէս հին աշխարհի իմաստուններից մէկն է ասել. «Ամենամեծ ֆարոգիչը մրջիւնն է, որն էլ միշտ լուռ է մնում»: Մտորումներ էին դրանք, որոնք յուզում են ամենքիս, քանզի վերջին հաշուով ամենքս էլ գլխահակ ենք ու ամօթապարտ մեր Տիրոջ առաջ, որին միայն վայել է փառք եւ երկրպագութիւն:

Տ. ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱՐՂ. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ